Արձանագրության 3
« ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/49» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

21.01.2019թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Վաթինյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Սաղոյան /գնահատող/, Ռ. Ղասաբօղլյան /գնահատող/,
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կիրակոսյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Մ. Վաթինյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն համաձայն որի մասնակիցունի հարկային պարտավորություն 2000/երկու հազար/ ՀՀ դրամի չափով:

1.2 «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/49» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակցի կողմից էլեկտրոնային կայքի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացրել են հրավերի պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3 դեմ - 0:

2. « ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/49» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Մ. Վաթինյան)

2.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 44-րդ կետը Արևշատի Սարգիս ՍՊԸ–ի կողմից ներկայացված հայտը 1-ին չափաբաժնի մասով մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

2.2 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետով ընդունած որոշումը և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-19/49» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել Արևշատի Սարգիս ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

(Մ. Վաթինյան)

3.1 Հաշվի առնելով որ 1-ին չափաբաժնի մասով միակ մասնակցի հարկային պարտավորությունը մեծ է առաջարկված գնի մեկ տոկոսից և մասնակցի հայտը մերժվում է՝ ընթացակարգը նշված չափաբաժնի մասով հայտարարվում է չկայացած:

3.2 Հաստատել ընթացակարգը չկայցած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

4.Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Մ. Վաթինյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը ավտոմեքենաների անվադողերի ձեռքբերման /2-րդ չափաբաժնի մասով/ պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել վերը նշված մասնակցին:

4.2 Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, որի հետ կնքվում է պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3 դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ. Վաթինյան

Անդամներ՝ ---------- Լ. Սաղոյան

---------- Ռ. Ղասաբօղլյան

Քարտուղար՝ ---------- Ն. Կիրակոսյան